Համառոտագիր

Բարձրագույն կրթության հասանելիության բարելավում աղքատների համար

ԱՌԱՋԱԴԵՄ
ՍՈՑԻԱԼԱԿԱՆ
ՏԵԽՆՈԼՈԳԻԱՆԵՐ

ADVANCED
SOCIAL
TECHNOLOGIES

GDN Global Development Network

The Global Research Capacity Building Program™

Բարձրագույն կրթության հասանելիության բարելավում աղքատների համար

ՏՆԱՅԻՆ ՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱՄԵՆԱՀԱՐՈՒՍ 20%-Ը ՄՈՏ 4 ԱՆԳԱՄ ԱՎԵԼԻ ՇԱՏ ՕԳՈՒՏ Է ՍՏԱՆՈՒՄ ԲԱՐՁՐԱԳՈՒՅՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ ՍՈՒԲՍԻԴԻԱՆԵՐԻՑ ՔԱՆ ԱՄԵՆԱԱՂՔԱՏ 20%-Ը

INTRODUCTION

Վերջին երկու տասնամյակների տնտեսական և սոցիալական անկումներն ուժեղ ազդեցություն են թողել Հայաստանի բարձրագույն կրթության ոլորտի վրա: Մատչումը բարձրագույն կրթությանը ներկայումս, ավելին քան երբեք, սերտորեն կապված է եկամուտների մակարդակի հետ: Աղքատների շրջանում բարձրագույն կրթությանը մատչման պակասը, իր հերթին, ազդում է տնային տնտեսությունների՝ աղքատությունը հաղթահարելու հնարավորության վրա: Այս արատավոր շրջանն առաջացել է մի շարք պատճառներով, որոնցից մի քանիսը կապված են կրթական համակարգի, իսկ մյուսները՝ ֆինանսական ռեսուրսներին պոտենցիալ շահառուների մատչումի հետ:

ԱՍՏ-ի կողմից 2011թ. իրականացված հարցումը ցույց է տալիս, որ բարձրագույն կրթությունից ստացվող օգուտների տեսանկյունից առկա է տագնապալի չափերի անջրպետ ամենահարուստ և ամենաաղքատ քվինտիլների միջև, երբ տնային տնտեսությունների ամենահարուստ 20%-ը մոտ 4 անգամ ավելի շատ օգուտ է ստանում պետական սուբսիդիաներից, քան ամենաաղքատ 20%-ը:

Գծապատկեր 1. Բարձրագույն կրթության ոլորտում օգուտների բաշխումը



ԲԱՐՁՐԱԳՈՒՅՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ ՈԼՈՐՏՈՒՄ ՕԳՈՒՏՆԵՐԻ ԲԱՇԽՄԱՆ ԴԻՆԱՄԻԿԱՆ ՀՈՒՇՈՒՄ Է, ՈՐ ԱՅՍ ՈԼՈՐՏՈՒՄ ՊԵՏԱԿԱՆ ՆԱԽԱՁԵՌՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՈՐՈՇ ԴՐԱԿԱՆ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆ ԵՆ ՈՒՆԵՑԵԼ ԵՐԿՐՈՐԴ ԵՎ ԵՐՐՈՐԴ ՔՎԻՆՏԻԼՆԵՐԻ, ԲԱՅՑ ՈՉ՝ ԱՄԵՆԱԱՂՔԱՏ ՔՎԻՆՏԻԼԻ ՎՐԱ

Եկամտային քվինտիլների միջև այսպիսի հսկայական անհամամասնությունը ենթադրաբար մի շարք գործոնների համակցված ազդեցության հետևանք է, ինչպիսիք են՝ բարձր որակի ավագ միջնակարգ կրթությանը (ավագ դպրոց) և մասնավոր ուսուցիչների միջոցով բուհերի ընդունելության քննություններին լավ պատրաստություն ստանալուն անհավասար մատչում ունենալը, ցածր և միջին

եկամուտ ունեցող ուսանողների համար բուհական կրթությունը ֆինանսավորելու այլընտրանքային աղբյուրների պակասը, ինչպես նաև ամենաառանցքային խնդիրը՝ ուսանողներին կառավարության սուբսիդիաների բաշխման մեխանիզմում դեպի աղքատներն ուղղված քաղաքականության բացակայությունը: Ներկայիս մեխանիզմը, ըստ որի բուհերի ուսանողներին կառավարության սուբսիդիաների բաշխումը 100%-ով կատարվում է հիմնվելով ընդունելության քննությունների ժամանակ ցույց տրված լավագույն արդյունքների վրա, եկել է դեռևս Խորհրդային Միության ժամանակաշրջանից և ոչ մի փոփոխություն չի կրել, չնայած այն փաստին, որ Խորհրդային Միության ժամանակաշրջանի համեմատությամբ (երբ յուրաքանչյուր ուսանող օգտվել է սուբսիդիաներից) այժմ ուսանողների 80%-ից ավելին վճարովի սկզբունքով սովորող ուսանողներ են և կառավարության ռեսուրսները բավականացնում են ուսանողների միայն մոտ 20%-ի համար:

Բարձրագույն կրթության ոլորտում օգուտների բաշխման դինամիկան հուշում է, որ այս ոլորտում պետական նախաձեռնությունները (ինչպիսիք են՝ պետական բյուջեի ֆինանսավորման շահառուների ցանկերի տարեկան վերանայումը՝ հիմնված տարեկան առաջադիմության վրա, ի տարբերություն նախկինում կիրառվող՝ միմիայն ընդունելության քննությունների վրա հիմնված մոդելի, որտեղ ամենահարուստ քվինտիլների ուսանողներն ունեին մրցակցային առավելություն) որոշ դրական ազդեցություն են ունեցել երկրորդ և երրորդ քվինտիլների (որոնք մատչում են ստանում բարձրագույն կրթությանը և հետագայում հույս են կապում կառավարության աջակցության մոդելների հետ), բայց ոչ՝ ամենաաղքատ քվինտիլի վրա (որտեղ նույնիսկ չեն էլ փորձում բուհերին մատչում ստանալ):

Փորձելով լուծում գտնել բարձրագույն կրթությանն անհավասարաչափ մատչման խնդրին, ԱՍՏ-ն մշակել է ընդգրկուն հետազոտական հաշվետվություն, որում քննության են առնվում մի շարք քաղաքականության այլընտրանքներ և մոդելավորվում է դրանց անհատական և համակցված ազդեցությունը՝ կառավարության սուբսիդիաներից ամենաաղքատ քվինտիլի օգուտների ավելացման մասով:

ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՏԱՐԲԵՐԱԿՆԵՐԸ

Քաղաքականության մոդելավորման վերլուծության նպատակն էր կառավարության համար միջամտությունների օպտիմալ մոդելի սահմանումը, որի դեպքում բարձրագույն կրթությանն ուղղվող պետական ծախսերի առնվազն 15%-ը հասնում է բնակչության ամենաաղքատ 20%-ին:

Մեր թիմը դիտարկել է նպատակին հասնելու երեք այլընտրանքներ: Թեև այլընտրանքները գնահատվել են առանձին, կառավարությունը կարող է ընտրել միջամտությունների այնպիսի համակցություն, որն ամենահարմարն է առաջարկված նպատակին հասնելու համար:

ՏԱՐԲԵՐԱԿ 1. ԱՎԱԳ ԴՊՐՈՑԻ ԾՐԱԳՐԻ ԼԻԱՐԺԵՔ ՆԵՐԴՐՈՒՄ

Բուհական ընդունելության քննությունների արդյունքները ցույց են տալիս, որ ավագ դպրոցների շրջանավարտները բուհ ընդունվելու ավելի մեծ հնարավորություններ ունեն քան՝ միջնակարգ դպրոցներինը: Սակայն, ԱՍՏ-ի հետազոտությունը ցույց է տալիս, որ ամենաաղքատ քվինտիլում ավագ դպրոցի տարիքի երեխաների միայն 9%-ն է ներկայումս ընդգրկված ավագ դպրոցներում: **Հաշվի առնելով, որ հարցված ամենաաղքատ տնային տնտեսությունների 65%-ը ցանկանում են իրենց երեխաներին ուղարկել ավագ դպրոցներ, այս քաղաքականության խնդրի լուծման կենսունակ քաղաքականության տարբերակներից մեկն է համարվել ավագ դպրոցի ծրագրի լիարժեք ներդրումը:**

ՏԱՐԲԵՐԱԿ 2. ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՎՐԱ ՀԻՄՆՎԱԾ ՆՊԱՍՏՆԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳԻ ՓՈԽԱՐԻՆՈՒՄՆ ԸՆՏԱՆԻՔԻ ԵԿԱՄՈՒՏԸ ՀԱՇՎԻ ԱՌՆՈՂ ՀԱՄԱԿԱՐԳՈՎ

Ներկայիս՝ արդյունքների վրա հիմնված պետական նպաստների համակարգը հաշվի չի առնում նպաստ ստացողի ընտանիքի համար դրա իրական կարիքը՝ հանգեցնելով ֆինանսական պատճառներով բուհական ուսումից հրաժարվելուն: Նոր՝ կարիքների վրա հիմնված ֆինանսավորման մոդելը կլրացնի ներկայիս՝ արդյունքների վրա հիմնված մոդելին և կնախագծվի այնպես, որպեսզի արդյունավետ կերպով նույնականացնի միայն ավելի ցածր եկամտով ընտանիքներից եկող ուսանողներին: Աղքատության մակարդակի սահմանման առկա գործիքները (ընտանեկան նպաստի համակարգ) կարող են օգտագործվել որպես հիմք՝ որոշելու ուսանողների նպաստների համակարգի կարիք ունեցողներին, ինչպես նաև նման աջակցության մակարդակը:

Առաջարկվող համակարգը կսահմանի ակադեմիական արդյունքների նվազագույն շեմը (ընդունելության և տարեկան քննությունների արդյունքները) և սահմանված շեմը հաղթահարողներին կտրամադրի որոշ միավորներ ընտանեկան նպաստների համակարգում՝ ուսանողական նպաստ ստանալու համար: Կրթաթոշակը կվճարի ուսման վարձի 20-100%-ը՝ կախված ընտանիքի աղքատության մակարդակից, ինչպես նաև կրթաթոշակային աջակցության համար հասանելի ֆինանսական միջոցներից:

ՏԱՐԲԵՐԱԿ 3. ՈՒՍԱՆՈՂԱԿԱՆ ՎԱՐԿԵՐԻ ՊԵՏԱԿԱՆ ԾՐԱԳՐԻ ՆԵՐԴՐՈՒՄ

Գոյություն ունի բուհերի ուսման վարձերի՝ ծնողների կողմից վճարումներից և պետական նպաստներից տարբերվող՝ այլ ֆինանսական աղբյուրների պակաս: Որոշ հայկական **առևտրային բանկեր վարկեր են տրամադրում ուսանողներին**, սակայն դրանք ավելի մոտ են սպառողական վարկերին՝ բարձր տոկոսադրույքներով և այլ պայմաններով, **որոնք մատչելի չեն ցածր եկամուտներ ունեցող ընտանիքների համար**:

Բարձրագույն կրթության ծախսերի, այդ թվում՝ ուսման վարձերի և ուսանելու այլ ծախսերի ֆինանսավորման այլընտրանքային աղբյուրի պակասը լրացնելու նպատակով կարելի է դիտարկել ուսանողական վարկերի այնպիսի սխեմայի ներդրում, որի թիրախը կլինեն ուսանելու գործընթացում իրապես հետաքրքրված անձինք:

ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՏԱՐԲԵՐԱԿՆԵՐԻ ԱԿՆԿԱԼՎՈՂ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ

Ուսումնասիրելով յուրաքանչյուր քաղաքականության տարբերակի հնարավոր ազդեցություններն օգուտների բաշխման վրա, ԱՍՏ-ն գտնում է, որ ուսանողների նպաստների համակարգի վերանայումը կարող է ամենամեծ ազդեցությունն ունենալ աղքատների օգուտների ավելացման գործում: Սակայն, **զգալի փոփոխությունների հասնելու համար կարող է պահանջվել քննարկված երեք տարբերակների համակցված ազդեցությունը:**

ԱՎԱԳ ԴՊՐՈՑԻ ԾՐԱԳՐԻ ԼԻԱՐԺԵՔ ՆԵՐԴՐՄԱՆ ԱԿՆԿԱԼՎՈՂ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ

Ինչպես արդեն նշվեց, ավագ դպրոցների շրջանավարտները բուհ ընդունվելու ավելի մեծ հնարավորություններ ունեն, քան միջնակարգ դպրոցների շրջանավարտները: Այդ իսկ պատճառով, ավագ դպրոցներին ամենաաղքատ քվինտիլի երեխաների մատչման բարելավումը կենսական նշանակության քայլ է՝ բարձրագույն կրթության ոլորտում օգուտների ավելի լավ (ավելի հավասար) բաշխմանը հասնելու համար: Ծրագրի լիարժեք ներդրման ազդեցությունը քանակապես սահմանելու ժամանակ ԱՍՏ-ն օգտագործել է հարցման՝ ավագ դպրոցներ հաճախելու ցանկության վերաբերյալ տվյալները (եթե

հասանելի էին) և բարեհաջող բուհեր ընդունվող ավագ դպրոցների շրջանավարտների հարաբերակցությունը: Հաշվարկները ցույց տվեցին, որ ավագ դպրոցի ծրագրի լիարժեք ներդրումը կարող է ավելացնել տնային տնտեսությունների ամենաաղքատ 20%-ի օգուտները 8.6%-ից մինչև 10.2%:

ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՎՐԱ ՀԻՄՆՎԱԾ ՆՊԱՍՏՆԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳԻ՝ ԸՆՏԱՆԻՔԻ ԵԿԱՄՈՒՏԸ ՀԱՇՎԻ ԱՌՆՈՂ ՀԱՄԱԿԱՐԳՈՎ ՓՈԽԱՐԻՆԵԼՈՒ ԱԿՆԿԱԼՎՈՂ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ

Հաշվի առնելով, որ ֆինանսական պատճառներով բուհեր դիմել չկարողացող՝ դպրոցների շրջանավարտների 55%-ը ներկայացնում են ամենաաղքատ քվինտիլը, ապա վերջինիս ուղղված ուսանողական նպաստների համակարգը կարող է ավելացնել ամենաաղքատ քվինտիլի ստացած օգուտների մասնաբաժինը 8.6%-ից մինչև 11.9%:

ՈՒՍԱՆՈՂԱԿԱՆ ՎԱՐԿԵՐԻ ՊԵՏԱԿԱՆ ԾՐԱԳՐԻ ԱԿՆԿԱԼՎՈՂ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ

Քանի որ ամենաաղքատ քվինտիլների 41%-ը պատրաստակամ է վերցնել ուսանողական վարկեր, ապա ուսանողական վարկերի ծրագիրը կարող է ավելացնել ամենաաղքատ քվինտիլների ներկայացուցիչների ներգրավվածությունը բուհերում 8.6%-ից մինչև 9.9%:

ԵՐԵՔ ՏԱՐԲԵՐԱԿՆԵՐԻ ԱԿՆԿԱԼՎՈՂ ՀԱՄԱԿՑՎԱԾ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ

Վերլուծությունը ցույց է տալիս, որ **բոլոր երեք ծրագրերի իրականացման դեպքում ամենաաղքատ քվինտիլի մասնաբաժինը կարող է աճել 8.6%-ից մինչև համարյա 14%:**

Գծապատկեր 2. Երեք տարբերակների համակցված ազդեցությունը



	Q1	Q2	Q3	Q4	Q5
Ներկայիս բաշխումը	8.6%	17.9%	19.0%	22.4%	32.1%
Ակնկալվող բաշխումը	13.9%	17.9%	17.3%	20.1%	30.8%

ՖԻՆԱՆՍԱՎՈՐՈՒՄ

Նոր քաղաքականությունների ներդրման սահմանային ծախսերի ընդհանուր գնահատումը՝ որպես պետական բյուջեի վրա լրացուցիչ բեռ, ցույց է տալիս, որ երեք տարբերակների իրականացումը բավականին մատչելի է: Առաջարկված տարբերակների զուտ ծախսը կազմում է 2011թ. կրթական ոլորտին փաստացի ուղղված պետական հատկացումների 0.49%, 1.26% և 1.08%-ը կամ հանրագումարում՝ 2.82%:

“Առաջադեմ սոցիալական տեխնոլոգիաներ” ՀԿ-ն (ԱՍՏ) կիրառական սոցիալական հետազոտությունների անկախ կենտրոն է, որը հիմնվել է 2003 թ.-ին: ԱՍՏ-ի հիմնական նպատակներից է հանրային ծախսերի առաջնահերթությունների և դրանց արդյունավետության շուրջ քաղաքական քննարկումների էմպիրիկ և վերլուծական բազայի ամրապնդումը,նպաստելով մասնավորապես առողջապահության, կրթության և ջրամատակարարման բնագավառներում հանրային ծառայությունների կառավարման բարելավմանը:

“Զարգացման համաշխարհային ցանցի” (GDN) հետ համագործակցելով, “Արդյունքներ զարգացման համար” ինստիտուտի (R4D) տեխնիկական աջակցությամբ և Միացյալ Թագավորության Միջազգային զարգացման ծրագրի (DFID) ֆինանսավորմամբ ԱՍՏ-ը 2009 թ.-ից Հայաստանում իրականացնում է “Հանրային ծախսերի հաշվետվողականության բարելավման համար ինստիտուտների զարգացում” ծրագիրը:

Զարգացման համաշխարհային ցանց
Վասանտ Քունջ Ինստիտուցիոնալ տարածք 4
2-րդ հարկ, Արևմտյան թև, ISID համալիր
Նոր Դելլի - 110070, Հնդկաստան
Հ: +91 11 4323 9494 / 2613 9494
www.gdn.int

Առաջադեմ սոցիալական տեխնոլոգիաներ
Բելյակով 9
ք. Երևան - 0001, ՀՀ
Հ: +374 95 561491
Հ: +374 55 212583
www.ast.am